ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 505-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրի առաջընթացի

1. Որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի («3. Բազային տարածական տվյալների շտեմարանի ճշգրտում, արդիականացում, օպտիմալացում և ստանդարտացում» ժամկետ՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ (շարունակական)) ապահովման նպատակով՝ Ազգային գեոպորտալ մուտքագրելու համար 2014 և 2021 թվականների օրթոֆոտոհատակագծերի հիման վրա գրասենյակային պայմաններում իրականացվել են ՀՀ Արարատի (1,075 քառ. կմ) և Շիրակի (2,015 քառ. կմ) մարզերի բազային քարտեզագրական շերտերի (շենք-շինություններ, ջրագրություն, ճանապարհային ցանց) թվայնացման աշխատանքներ: Իրականացվել են նաև ՀՀ Արմավիրի մարզի արդեն իսկ թվայնացված շերտերը ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխանեցնելու աշխատանքները:

2. Որոշման N 2 հավելվածի 6-րդ կետի («Ինտեգրված կադաստրի բազային բաղադրիչների հասանելիության ապահովում իրական ժամանակային ռեժիմում») ժամկետ՝ 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով՝ օրենքով վերապահված լիազորությունները կատարելու համար ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգի միջոցով բազային բաղադրիչների հասանելիություն է ապահովվել հետևյալ պետական մարմիններին՝

- Վարչապետի աշխատակազմ,
- Առողջապահության նախարարություն,
- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
- Շրջակա միջավայրի նախարարություն,
- Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,
- Էկոնոմիկայի նախարարություն,
- Պաշտպանության նախարարություն,
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,

- Ներքին գործերի նախարարություն,
- Պետական վերահսկողական ծառայություն,
- Ազգային անվտանգության ծառայություն,
- Քննչական կոմիտե,
- Քաղաքաշինության կոմիտե,
- Վիճակագրական կոմիտե,
- Ջրային կոմիտե,
- Պետական գույքի կառավարման կոմիտե,
- Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին,
- Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին,
- Մրցակցության պաշտպանության հանձնաժողով,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,
- Արագածոտնի մարզպետարան,
- Արարատի մարզպետարան,
- Լոռու մարզպետարան,
- Շիրակի մարզպետարան,
- Սյունիքի մարզպետարան:

Վերոնշյալ ցանկը մշտապես փոփոխվում է: Ըստ անհրաժեշտության համապատասխան գրությամբ դիմելու դեպքում ծառայությունը ակտիվացվում է պետական մարմինների համար կամ ավելացվում են նոր օգտվողներ: Ներկայումս հարթակում պետական մարմիններից գրանցված են շուրջ 100 օգտվողներ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգը պարբերաբար արդիականացվում է, և ավելացվում են նոր քարտեզագրական շերտեր ու համապատասխան հատկանիշային տվյալներ, կատարելագործվում են որոնման հնարավորությունները, հաշվետվությունների արտահանման տեսակները: Կադաստրի կոմիտեն տեխնիկական աջակցություն է ցուցաբերում օգտվողներին, ինչպես նաև ընդունում է վերջիններիս կողմից ներկայացվող առաջարկությունները, որոնք ներդրվում են ծառայության որակի բարելավման համար:

3. Որոշման N 2 հավելվածի 7-րդ կետի («7. Ինտեգրված կադաստրում միջազգային ISO ստանդարտներին համապատասխան անվտանգության համակարգի ներդրում, ըստ անհրաժեշտության ինտեգրում EKENG էլեկտրոնային կառավարման հարթակի

հետ» ժամկետ՝ 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով՝ մշակվել են հետևյալ փաստաթղթերը՝

- Տեղեկատվական համակարգերի ընդունելի օգտագործման կանոնակարգ,
- Իրավասությունների կառավարման կարգ,
- Գաղտնաբառերի կանոնակարգ,
- Տեղեկատվական ակտիվների կառավարման կարգ,
- Տեղեկատվական համակարգերի ընդունելի օգտագործման կանոնակարգ,
- Տեղեկատվական անվտանգության քաղաքականություն,
- Փոփոխությունների կառավարման քաղաքականություն,
- Տեղեկատվական անվտանգության ռիսկերի կառավարման կարգ,
- Տեղեկատվական անվտանգության ռիսկերի դիմագրավման պլանի կազմման ուղեցույց:

Կադաստրի կոմիտեում ներդրված համակարգերը և ցանցային ենթակառուցվածքը համապատասխանում են միջազգային ISO ստանդարտներին: Համաձայն ստանադարտների կազմակերպությունում պետք է լինի անվտանգության մասնագետ, սակայն պետական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների աշխատավարձի ոչ մրցունակ լինելը խոչընդոտում է բարձրակարգ մասնագետներ ներգրավելուն: Վերոնշյալ խնդիրը նաև մասնագետների արտահոսքի պատճառ է հանդիսանում:

4. Որոշման N 2 հավելվածի 9-րդ կետի («9. Ըստ անհրաժեշտության, Ինտեգրված կադաստրի ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքի կազմում, ծրագրի ձեռքբերում և ներդրում» ժամկետ՝ 2022 թվականի դեկտեմբեր-2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով՝ բազային տարածական տվյալների հետևյալ խմբերը մուտքագրվել են ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգ՝

- վարչական սահմաններ.
- անշարժ գույք («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված կադաստրային քարտեզ).
- գնահատում.
- իրավունք (գույքային իրավունքի տեսակ).
- հողամասի նպատակային և գործառնական նշանակություն (հողատեսք).
- հասցե.
- աշխարհագրական անվանումներ.
- օդատիեզերական լուսանկարահանման տվյալներ:

Շարունակվում են «Տարածական տվյալների մասին» օրենքով սահմանված այլ բազային տարածական շերտերի մշակման աշխատանքները:
Որոշման N 2 հավելվածի 11-րդ կետի («11. Պիլոտային ոլորտային կադաստրի ստեղծում և ներդրում» ժամկետ՝ 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» N ՀՕ-295 ՀՀ օրենքում 2023 թվականի ապրիլի 13-ի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 145-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2023 թվականի մայիսի 21-ից) կատարվել է փոփոխություն և նշված օրենքի 47.1-ին հոդվածում լրացվել են 5-12-րդ մասերը, որին համապատասխան իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների թվայնացման և աշխարհտեղեկատվական համակարգերի ստեղծման աշխատանքներ՝ օրթոֆոտոհատակագծի հիման վրա:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ թվայնացման աշխատանքների արդյունքում ստեղծված վերոնշյալ ճանապարհային ցանցի քարտեզագրական շերտը արտացոլվել է ազգային գեոպորտալում:
Որոշման N 2 հավելվածի 12-րդ կետի («Գեոպորտալի և մետատվյալների շտեմարանի ներդրում և լիարժեք վերագործարկում», ժամկետ՝ 2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով՝ ՀՀ ազգային գեոպորտալի՝ geoportal.am, առկա 600-ից ավելի վեկտորային և ռաստերային տարածական տվյալների վերաբերյալ մետատվյալներ:

7. Որոշման N 2 հավելվածի 13-րդ կետի («Հասցեների միասնական ռեեստրի և ԱՏՏԵ-ի ինտեգրում», ժամկետ՝ 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ) ապահովման շրջանակներում հասցեների ռեեստրի ինքնաշխատ (ավտոմատացված) տեղեկատվական համակարգի ստեղծման և հասցեների ճշգրտման նպատակով Կադաստրի կոմիտեի հատուկ էլեկտրոնային հարթակի (e-cadastre.am) միջոցով ՀՀ բոլոր համայնքներ է ուղարկվել այդ համայնքների բնակավայրերի հասցեավորված գույքերի՝ կոմիտեում առկա հասցեների ցանկը՝ դրանցում առկա տվյալները համայնքների տվյալների հետ համեմատելու համար: Արդյունքում՝ շուրջ 1,073,000 միավոր ստանդարտացված հասցեներ մուտքագրվել են հասցեների ռեեստրի տեղեկատվական բազա: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համայնքներից ստացված փաստացի հասցեավորման տվյալներում առկա են թերություններ, որոնք ևս ուսումնասիրվել և կապակցվել են կադաստրային

քարտեզներին, սակայն ներկայացված տվյալների իրավական կարգավիճակը հնարավոր կլինի որոշել և համապատասխան ուղղումներ իրականացնել համայնքների կողմից հասցեավորման վերաբերյալ որոշումներ կայացվելուց հետո: Ներկայումս ստեղծված է հասցեների ռեեստրի տեղեկատվական բազան, որը ընթացիկ վարվում է Կադաստրի կոմիտեի կողմից, և բազայում ներառված տվյալները կարող են համալրվել և ուղղվել համապատասխան իրավական հիմքերի առկայության պարագայում:

8. Որոշման N 2 հավելվածի 14-րդ կետի («14. Ինտեգրված կադաստրի ոլորտային բաղադրիչների ստեղծում, համապատասխան սարքածրագրային միջոցների ներդրում և համակարգի ամբողջական գործարկում՝ ըստ ոլորտների պատրաստվածության») միջոցառման ժամկետը, համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 672-Լ և 2021 թվականի ապրիլի 8-ի N 505-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1583-Լ որոշման 2-րդ կետի 2-րդ մասի ը) ենթակետի, տեղափոխվել է 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: Փոփոխվել է նաև «Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ» 6-րդ սյունակի նշումը. «ֆինանսավորում չի պահանջվում» բառերը փոխարինվել են «ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ 185 մլն ՀՀ դրամ» բառերով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2022 թվականին https://geoportal.am/, https://maparmenia.am/ հղումներով գործարկվել է ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալը, և բոլոր գերատեսչություններին տրվել է առցանց հասանելիություն բազային տարածական տվյալներին, անհրաժեշտության դեպքում՝ նաև հասանելիություն առցանց քարտեզագրական ծառայության (Օ Ջի Սի Վի Էմ Էս (OGC WMS)) միջոցով: ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջները հիմք են հանդիսանում պետական մարմինների կողմից թեմատիկ քարտեզագրական շերտերի և տեղեկատվական բազաների ստեղծման, ստանդարտացման և ազգային գեոպորտալին ինտեգրման համար:

Կատարող՝ Լ. Քոչարյան
Իրավաբանական վարչություն
Հեռ.՝ 060-474132